ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
պատմական գիտությունների թեկնածու
amirjanyan.hasmik@rambler.ru

ՀՈԳԵՎՈՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ (ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ. XVIII Դ.)

Բանալի բառեր՝ սոցիալ-տնտեսական, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, բարեգործներ, Ամենայն Հայոց կաթողիկոս, նամակագրություն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրումից ի վեր հաստատվել ու ժամանակի ընթացքում ամրապնդվել է Մայր Աթոռի եկամուտների ապահովման համակարգ, ինչն առաջնահերթ ուղղված էր ոչ միայն վանքի ու ամբողջ հոգևոր կառույցի գոյությանն ու բարեկեցությանը: Դրանք ապահովում էին վանքի սպասավորների սննդի, հագուստի, առհասարակ կյանքի անհրաժեշտ պայմանները: Հետևաբար, վանքի եկամուտներից էր կախված ամբողջ Հայաստանեաց եկեղեցու տնտեսական դրությունը:

XVIII դ. վերջին Պարսկաստանի բռնապետության տակ գտնվող Երևանի խանությունում տիրող քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պայմաններում աննախադեպ վատթարացել էր հոգևոր կառույցի տնտեսական վիճակը: Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու (1780–1799) առաջնորդության գրեթե ամբողջ շրջանում վանքի տնտեսական վիճակը շարու-

նակում էր մնալ անմխիթար. պատահում էր, որ ամիսներով դրամ չէր մտնում Էջմիածին, սպառվում էին վանքի սննդի պաշարները[1]:

Էջմիածնի վանքը, որպես հոգևոր տուրք, ամենամյա զգալի գումարներ ու ապրանքներ էր ստանում նվիրակների[2] միջոցով, որոնք մեկնում էին տարբեր վայրեր՝ վանքի համար «իմտատիա» (նպաստ, օգնություն)՝ հացամթերք, կաթնամթերք, մսամթերք, մոմ և այլն ժողովելու:

Քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով բնակչությունը դժվարանում էր վճարել տուրքերը, հարկերը, որոնց մի մասն ուներ պարտադիր նվերների բնույթ: Նրանք երբեմն ոչ միայն պարզապես հրաժարվում էին հարկը վճարելուց, այլև ըմբոստանում էին, ինչպես օրինակ, 1785 թ. հունվարին Թովմա Առաքելոց վանքի վիճակում գտնվող Դաշտ գյուղի բնակիչները[3]: Կաթողիկոսի գրագրությունից երևում է, որ երբեմնի հարուստ ու բարձր հարկատու վանքերը զրկվել էին բնակչությունից ու եկամուտներից: Պատճառը թշնամի ազգերով շրջապատված լինելն էր, տարածաշրջանում քաղաքական անկայուն իրավիճակը, ճանապարհների փակվելը կամ դրանց անվտանգության բացակայությունը, ինչը մեծապես խանգարում էր տնտեսական ապրանքների ներմուծմանը:

Ս. Աթոռի եկամուտները մեծ չափով համալրվում էին անհատների կողմից, որոնք տարբեր առիթներով՝ հանուն իրենց խղճի, մահացած հարազատների հոգու հանգստության (հոգեբաժին),

---

[1] *Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1780–1785),* (այսուհետև՝ Դիվան…), Հ. Ա., աշխատասիրությամբ **Վ. Գրիգորյանի,** Երևան, 1984, էջ 162, 183, 200:

[2] Նվիրակը թեմի կողմից գործուղված անձ էր, որը պետք է տվյալ վայրում հավաքեր հոգևոր հարկը, ժողովարարություն՝ հանգանակություն կատարեր հօգուտ թեմի, զբաղվեր հոգևոր այլ հարցերով:

[3] **Գրիգորյան Վ.,** *Երևանի խանությունը XVIII դարի վերջում* (այսուհետև՝ Երևանի խանությունը…), Երևան, 1958, էջ 62–63, Դիվան…, հ. Ա, էջ 501:

Աստծո գթությանն ու ներմանն արժանանալու և այլևայլ պատճառներից ելնելով՝ նվիրատվություններ էին կատարում կամ միջոցներ կտակում Մայր Աթոռի օգտին: Էջմիածինը բարեպաշտների կողմից ստացել է սննդամթերք, ընտանի կենդանիներ, կենցաղային և այլ նշանակության տարբեր իրեր, դրամ[4]:

Ղուկաս Կարնեցու բազմաթիվ նամակները վկայում են, որ ոչ միայն հոգևոր հասույթը, այլև նվերները ձեռք են բերվել ու Էջմիածին հասցվել մեծ դժվարությամբ:

Դրանով ենք բացատրում այն հանգամանքը, որ Ղուկաս Կարնեցու օրոք մեծ չափերի էր հասել ժողովարարության կոնդակների (դրամական հանգանակության) քանակը: Կաթողիկոսը նման կոնդակներ էր տրամադրում տարբեր երևելի մարդկանց, քահանաների, վանքերի, որոնք ինչ-ինչ պատճառներով զրկվել էին ապրուստի միջոցներից կամ ընկել էին պարտքերի տակ[5]: Երբեմն նմանատիպ կոնդակներ տվել են օտարազգի գործիչների, ինչպես օրինակ՝ վրացական արքայական տան ներկայացուցիչներին, ասորիների կաթողիկոս Մատթեոսին[6] և այլն: Գոյահավաքման նման կարգը ևս առաջ էր բերում բնակչության դժգոհությունը:

Նմանօրինակ պայմաններում Էջմիածնի ընդարձակ տնտեսությունը վարելու համար Ղուկաս Կարնեցին փորձում էր գտնել առատաձեռն բարեգործներ, կամ՝ օգնության խնդրանքով դիմել հայկական տարբեր համայնքների բնակչությանն ու երևելիներին՝ ձեռք բերելու գույք, մթերք, դրամ: Նա Երևանի խանության բնակավայրերի, Գանձակի, Բալուի, Նախիջևանի և այլ վայրերի հոգևոր այրերին ու ժողովրդին նամակների միջոցով հանձնարարում էր հոգևոր գանձապետության գործին հետևել, եկեղեցական հարկերը

---

[4] Դիվան…, հ. Ա, էջ 203:
[5] ՄՄ, ձեռ. Հ^մր 4449, թ. 17ա, Դիվան…, հ. Բ, էջ 216, 603:
[6] Դիվան…, հ. Բ, էջ LXXIX, XCIII:

և պարտադիր նվերները ժամանակին հավաքել ու հասցնել Մայր Աթոռ[7]: Գրեթե բոլոր նվիրակների հետ ուղարկվում էր ուղեկցող նամակ տեղի հոգևոր առաջնորդներին, որում կաթողիկոսը, ներկայացնելով Ս. Աթոռի տնտեսական ծանր վիճակը, հորդորում էր ժամանակին և առատությամբ տալ վանքին հասանելիք մթերքը, դրամն ու նվերները[8]: «...Գոյաթափ եղև Սուրբ տունս...և կարոտ եմք ...օգնութեանն մերազնեաց օրհեալ ժողովրդաց»[9]-գրում է կաթողիկոսն արևմտահայ ամիրաներին՝ խնդրելով օժանդակել այնտեղ մեկնած նվիրակին:

«...Նարդենիս[10] յամենայն կողմանէ պակասաւոր եմք, ուր ուրեք առնելիք կան տեղդ սրբոյ Աթոռոյս, առեալ մեզ հասուցես»[11],- գրում է Կարնեցին Կարինում Ս. Աթոռի գործակալ Հայրապետին:

Երբեմն կաթողիկոսը նվիրակների միջոցով հաղորդում էր, թե ինչի կարիք կար Էջմիածնում: Նմանօրինակ դեպքում, փաստորեն, հավաքվող հասույթը կրում էր ոչ թե հոգևոր հարկի տեսք, այլ՝ պարզապես նվիրատվության: Հայտնի է, որ Կ. Պոլսից, Կեսարիայից, Հալեպից, Խոյից, Հնդկաստանից ձեռք են բերվել այնպիսի իրեր, ինչպես օրինակ՝ հեռադիտակ, տպագրաթուղթ, ծխախոտ, մարմարի քարեր[12] և այլն, որոնք չէին կարող հոգևոր հասույթի պարտադիր մաս լինել: Դրանք կամ տեղերում գնվել են Մայր Աթոռի գումարներով, կամ ձեռք են բերվել բարեգործների միջոցով:

---

[7] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ^{մր} 4496, թ. 22ա, Դիվան…, հ. Ա, էջ 135, 140–141, 142:

[8] ՄՄ ձեռ. Հ^{մր} 4538, թ. 96բ, Դիվան…, հ. Ա, էջ 232–233, 299:

[9] ՄՄ ձեռ. Հ^{մր} 4538, թ. 67ա:

[10] Նարդենիս (թրք.) – այժմ:

[11] Դիվան…, հ. Ա, էջ 115:

[12] ՄՄ, ձեռ. Հ^{մր} 4538, թ. 24ա, **Գրիգորյան Վ.,** *Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի անտիպ նամակներում*, «Էջմիածին», 1995, Զ–Է, էջ 88: Դիվան…, հ. Ա, էջ 77–78, հ. Բ, էջ XXXV–XXXVI (առաջաբան), 130:

Կաթողիկոսը կապեր ուներ հեռավոր Չինաստանի հետ, այնտեղից ստանում էր նվիրատվական գումարներ, նվերներ, օրինակ չինահայ բարերար, մեծահարուստ Մատթեոս Հովհաննիսյանից[13]:

Առավել դժվարություն էր ներկայացնում հայկական վանքերին հասցեագրված կտակներով նախատեսված իրերի ու դրամի ձեռքբերումն ու Էջմիածին հասցնելը, տարբեր երկրներում բնակվող բարեգործների կողմից Էջմիածնին նվիրաբերված անշարժ գույքը (այգիներ, տներ, խանութներ և այլն) որպես Մայր Աթոռի սեփականություն հաստատելը և այլն: Էջմիածնի գործակալները և նվիրակները փորձում էին ստանալ հեռավոր երկրներում կտակված գումարները և առաքել Էջմիածին:

1786 թ. մայիսին Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Ս. Աթոռի գործակալ Հոհանջան Գերաքյանի (Յոհանջան Հակոբյան) Ղուկաս Կարնեցուն ուղարկած նամակից իմանում ենք, որ Հնդկաստանում բնակվող հայ երևելի Քամալ Ստեփանյանը մահից առաջ 460 ռուփի[14] էր կտակել Էջմիածնի վանքին և կտակարար կարգել Հոհանջանին: Վերիջնս այդ գումարն ուղարկել էր Բասրա՝ Էջմիածնի գործակալ Հովհաննես Բեթղեհեմյանին, իսկ նա՝ «ի մեծն Պոլիս փոլիցայ առնելով, ձեռամբ տեղլոյ նուիրակին մերոյ՝ Իսահակ աստուածաբան վարդապետին, հասոյց ի սուրբ Աթոռս»[15]:

Հայտնի է, որ Ղուկաս Կարնեցին 1795 թ. նամակագրություն է վարել Կալկաթայի, Բասրայի և այլ վայրերի Ս. Աթոռի գործակալների և տեղի երևելիների հետ՝ Մայր Աթոռին կտակված գումարներ ու նվերներ ստանալու համար[16]:

1788 թ. մայիսի 15-ին Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հ. Արղությանին հասցեագրված մի նամակից տեղեկանում ենք, որ

---

[13] Դիվան…, հ. Բ, էջ 128–129:
[14] Հնդկական դրամական միավոր:
[15] **Գրիգորյան Վ.,** նշվ. հոդ., «Էջմիածին», էջ 92:
[16] ՄՄ, ձեռ. Հ^{մր} 4538, թ. 37ա, **Աղանեանց Գ.,** նշվ. աշխ., Դ, էջ 318, 324:

Գորիի բնակիչ Ամիրաղի որդի Ավթանդիլը ժամանակին 50 թուման էր խոստացել Գորիում հայկական եկեղեցի կառուցելու համար. «Քանզի ի Գորի եկեղեցի մի շինի հոգացութեամբ հարազատ գործակալին մերոյ տէր Սահակ աշխատասէր քահանային»: Սակայն կտակարարը վախճանվում է՝ մահից առաջ կտակելով գումարը տեղ հասցնել՝ եկեղեցու կառուցումն իրագործելու համար: Կարնեցին հանձնարարում է անպայման ձեռք բերել գումարն ու օգտագործել ըստ նախատեսվածի[17]:

1797 թ. Կեսարայի մահտեսի Հովհաննեսին Ղուկաս Կարնեցին գրում է, որ տեղի առաջնորդ Մատթեոսը մահվանից առաջ Ս. Աթոռին գումար է կտակել, պահանջում է դրամը վերածել ոսկու և ուղարկել[18]:

1798 թ. գարնանը կաթողիկոսը փորձում է նամակների միջոցով կազմակերպել Բաղդադում վախճանված Մարգար աղայի և Աստվածատուր վարդապետի կտակած գումարները Էջմիածին հասցնելու գործը[19]:

Ոմն Խաչատուր Ս. Աթոռին է կտակում Երևանի իր տունը[20]:

Կաթողիկոսն օրինագրեր ու շնորհակալագրեր է հղել Կ.Պոլիս՝ տիրացու Սարգսին՝ նվիրաբերած ոսկու և արծաթի, Երնջակի վանքի առաջնորդ Կարապետ վարդապետին՝ ջրաղացի քարերի, մի խումբ թիֆլիսաբնակ հայերի՝ մատաղացու ընտանի կենդանիների համար[21]:

Նմանօրինակ գրություններ են ուղարկվել կոստանդնուպոլսեցի ամիրաներ Վարդերեսին և Նիկողայոսին՝ ուղարկված 20-ական ղուրուշի համար՝ «...վասն մասնակցութեան յախճապակի աղիւ-

---

[17] **Գրիգորյան Վ.,** նշվ. հոդ., «Էջմիածին», էջ 92:
[18] ՄՄ, ձեռ. Հմր 6298, թ. 15բ–16ա:
[19] ՄՄ, ձեռ. Հմր 6298, թ. 18բ, Հմր 2922, թ. 42բ:
[20] ՄՄ, ձեռ. Հմր 4484, թ. 68ա:
[21] ՄՄ, ձեռ. Հմր 4424, թ. 107ա, Հմր 6298, թթ. 30բ, 37ա:

սողն հանուն Ս. Տաճարի, ...վասն յիշատակի հոգելոյս ծնողացդ..., առ ի շքեղութիւն որմոց Քրիստոսակերտ Ս. Տաճարիս»[22]:

Էջմիածնի վանքը մեծ նվիրատվություններ էր ստանում ուխտավորներից: Յուրաքանչյուր տարի Արևմտյան Հայաստանի բնակավայրերից, Ղրիմից, Թոխատից, Կ. Պոլսից, Կեսարիայից, Թրակիայից և այլ վայրերից հայերն այցելում էին Մայր Աթոռ: Նրանց կողմից ամենատարբեր նվիրատվություններ էին կատարվում հոգուտ Մայր Տաճարի: Ուխտավորները նաև տեղ էին հասցնում իրենց համաքաղաքացիների կողմից ուղարկված իրերը, դրամը և այլն[23]:

Ղուկաս Կարնեցին թոխատցի մահտեսի Իսկանդարին նամակով շնորհակալություն է հայտնում քաղաքից եկած ուխտավորների հետ ոսկի ուղարկելու համար և գրում, որ այն օգտագործվել է Ս. Աթոռի կարիքների համար[24]: 1798 թ. ուխտավորների հետ ուղարկած գումարի համար կաթողիկոսը շնորհակալություն է հայտնում Նախիջևանի երևելիներ Խաչիկին, Մահտեսի Գևորգին[25]:

Ինչպես հարիր էր ժամանակաշրջանին, հաճախ եկեղեցուն պատկանող գույքը և դրամական միջոցները ժամանակին կամ ընդհանրապես տեղ չէին հասնում: Պատճառը ոչ միայն ամենատարբեր ավազակային հարձակումներն էին, այլև՝ գանձանական միջոցների հափշտակության բազմաթիվ դեպքերը:

1782 թ. սեպտեմբերին Ղուկաս կաթողիկոսը նամակ է գրում Պարսկաստանի Ռեշտ քաղաքի բնակիչներ Նավասարդին և Հովհաննեսին՝ դատապարտելով, որ յուրացրել են անժառանգ Ավետի

---

[22] ՄՄ, ձեռ. Հ՚մր 6298, թ. 21բ, 22ա:
[23] ՄՄ, ձեռ. Հ՚մր 2922, թ. 33ա, Հ՚մր 6298, թ. 3բ, Դիվան..., հ. Ա, էջ 304, 308:
[24] ՄՄ, ձեռ. Հ՚մր 6298, թ. 3բ:
[25] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ՚մր 6298, թ. 10բ, 21բ:

գույքը: «Մի՞թէ չցաւիք վասն հաւատոյ մօրս ...ձերոյ սրբոյ Աթոռոյս և չխնայէք ի հոգիս ձեր, որ այդպէս զանպատշաճ բանս առնէք»[26]:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ Ս. Գեղարդը մարդկանց կարիքների համար այլ վայրեր ուղարկելու դիմաց Մայր Աթոռը նվիրատվություններ էր ստանում հասարակ բնակչությունից: Այն վերադարձվում էր «...լիալիր արդեամբք»[27]: 1790 թ. սեպտեմբերի նամակից տեղեկանում ենք, որ Բայազետի ժողովուրդը Գեղարդը «պատուով և արդեամբ» վերադարձրել է[28]: 1791 թ. Կարնեցին Ղզլ-չախչախ գյուղի բնակիչներին օրհնագիր է հղում՝ հանուն Ս. Գեղարդի տված 40 սոմար[29] գարու համար[30]:

Կաթողիկոսի շնորհակալագրերն ու օրհնագրերը տարբեր վայրերի (Բաղեշ, Օրթագյուղ, Պրուսա, Թոխատ, Արդահան, Ղալաթիա, Վան, Եվդոկիա, Կարին, Զմյուռնիա, Կ. Պոլիս, Գանձակ և այլն) հոգևոր գործիչներին (եկեղեցական հասույթն ուղարկելու) և աշխարհական անձանց (բարեգործությունների կամ նվիրատվություններ տրամադրելու դիմաց)[31] վկայում են Էջմիածնին նվիրաբերված բարեգործական միջոցների մասին:

Դրամական մեծ նվիրատվություններ էին կատարում Հնդկաստանի հայերը: Կաթողիկոսը շնորհակալական նամակներ է հղել Հնդկաստան՝ Բոմբեյ, Սուրաթ, Մադրաս, Կալկաթա, Բանդերբուշեռ, Սեիդապատի, Ագբարաբադ, Դաքքա և այլ քաղաքներ, Իրաք՝

---

[26] Դիվան..., հ. Ա, էջ 338–339:

[27] ՄՄ, ձեռ. Հմր 4424, թ. 179բ, ձեռ. Հմր 4538, թ. 8ա–8բ:

[28] Նույն տեղում, էջ 560:

[29] Մեկ սոմարը հավասար էր 10 լիտրի:

[30] Դիվան..., հ. Բ, էջ 593:

[31] Տե՛ս ՄՄ, Հմր 4424, թ. 101բ, ձեռ. Հմր 4449, թ. 3ա, 9ա–9բ, 10բ–11ա, 34բ, 35ա, 38բ, 39ա–39բ, 40բ–41ա և այլն, ձեռ. Հմր 4482, 4բ, 5բ, 6բ, 7բ–9բ, 12ա, թթ. 100ա–104բ և այլն, ձեռ. Հմր 4496, թ. 24բ, ձեռ. Հմր 4538, թ. 51ա 51բ, 55բ, 81բ և այլն, **Աղանեանց Գ.,** նշվ. աշխ., Դ, էջ 339–340, 350–351, 639, Դիվան..., էջ 113, 115:

Բասրա, Բաղդադ[32]: Ս. Տաճարին Մադրասից նվերներ էր ուղարկում հայտնի մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը[33]:

Անհատ նվիրակների ուղարկած եկեղեցական իրերը, այդ թվում արծաթյա խաչերը հանձնվում էին Մայր Տաճարին[34]:

Հետաքրքիր է, որ կաթողիկոսի շնորհակալագրերի մի մասը հասցեագրված է եկեղեցուն նվիրված կանանց (հիմնականում Արևմտյան Հայաստանի բնակավայրերից, Բաղդադից), որոնք հոգուտ Ս. Աթոռի դրամական, նյութական և այլ նվիրատվություններ են կատարել[35]: Նվերների մեջ գերակշռում են եկեղեցական հանդերձներն ու կահ-կարասին:

Բարեպաշտների նվիրատվությունները նախևառաջ ծառայում էին վանքի շինարարական, վերանորոգչական, նոր շինությունների կառուցման աշխատանքներին: Ղուկաս Կարնեցու հովվապետության օրոք Մայր Տաճարը հիմնավերանորոգվում է, մի շարք նոր շինություններ են ավելացվում: Հայտնի է, որ 1785 թ. սկսած մի քանի անգամ կաթողիկոսի հրավերով Էջմիածին է ժամանում նկարիչ Հովնաթանյանների հայտնի գերդաստանի ներկայացուցիչ Հովնաթան Հովնաթանյանը (1725–1799)՝ նկարազարդելու վանքը: Հովնաթանյանն աշխատել է նաև խաչվառների[36] նորոգման վրա: Կարնեցու վկայությամբ այդ ամենի դիմաց վճարվեց հայ բնակչության նվիրատվությունների շնորհիվ[37]:

---

[32] ՄՄ, ձեռ. Հ՝մր 4424, թ. 100ա, ձեռ. Հ՝մր 4482, թ. 65ա–65բ, 67ա–71ա, 100ա, Դիվան…, հ. Բ, էջ 127–129:

[33] ՄՄ, ձեռ. Հ՝մր 4538, թ. 39ա:

[34] Տե՛ս նույն տեղում, ձեռ. Հ՝մր 4482, թթ. 102բ, 103ա:

[35] Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ՝մր 4496, թ. 22ա–22բ, 23ա, 26ա, ձեռ. Հ՝մր 4482, թ. 12ա, 14ա, 24բ, 27բ, 101բ–102ա, 103ա:

[36] Խաչվառ, խաչվար-կտավի կամ վահանի վրա նկարված խաչ՝ Քրիստոսի կամ Աստվածածնի պատկերով:

[37] **Օրմանեան Մ.,** նշվ. աշխ., էջ 3227, Դիվան…, հ. Բ, էջ XXXI (առաջաբան):

Բարեգործների ուղարկած գումարները ծախսվել են նաև Էջմիածնի տպարանի բարեկարգման, գրքերի տպագրման, տարբեր վայրերից տպագրաթուղթ գնելու և Էջմիածին հասցնելու նպատակով:

Գումարների միջոցով մասամբ լուծվում էին նաև վանքի պարենամթերքի և այլ խնդիրները:

Ղուկաս Կարնեցու շնորհակալագրերն ու օրհնագրերն՝ ուղղված տարբեր վայրերի հոգևոր գործիչներին և աշխարհական անձանց յուրահատուկ սկզբնաղբյուրներ են ոչ միայն Էջմիածնի, այլև առհասարակ երկրի տնտեսական կյանքի վերաբերյալ:

ДУХОВНЫЕ ПОЖЕРТВОВАНИЯ КАК СВОЕОБРАЗНЫЙ ПРИМЕР БЛАГОТВОРИТЕЛЬСТВА (В ГОДЫ ПАТРИАРШЕСТВА ГУКАСА КАРНЕЦИ (1780–1799)

АМИРДЖАНЯН А.

Резюме

Ключевые слова: Социально-экономический, Первопрестольный Св. Эчмиадзин, благотворители, Католикос Всех Армян, переписка.

Во время предводительства Католикоса Всех Армян Гукаса Карнеци Первопрестольный Св. Эчмиадзин столкнулся с социально-экономическим кризисом. В деле благоустройства монастыря неоценимый вклад внесли армянские диаспоры, видные деятели, благотворители, а также простые люди. Велика роль индивидуальных спонсоров. Благодаря их финансовой поддержке претворились в жизнь многие благотворительные, а также образовательно-культурные прогаммы. Переписка Католокоса с архиереями, кондаки

(официальное послание Католикоса) содержат многочисленные сведения о пожертвованиях народа для реконструкции кафедрального собора св. Эчмиадзин.

SPIRITUAL DONATIONS AS A SPECIFIC EXAMPLE OF CHARITY (DURING THE CATHOLICOSATE OF GHUKAS KARNECI (1780–1799)

AMIRJANYAN H.

Summary

Keywords: social-economic, Mother See of Holy Etchmiadzin, charity, Catholikos of All Armenians, correspondence.

During the leadership of Catholikos of All Armenians Ghukas Karneci, the Cathedral of Holy Etchmiadzin faced a serious economic crisis. The Armenian diaspora, prominent figures, charitable organizations and ordinary people have made invaluable contributions to the renovation of the monastery. Thanks to their financial support, most of the charitable and educational-cultural programs became possible.

Catholikos's correspondence with bishops, Kontakions (official message of Catholikos) contain various information about the donations of Armenian people for the reconstruction of the Cathedral of Holy Etchmiadzin.